

5.7. Հիդրոոդերևութաբանական պայմանները Հայաստանում

5.7.1. 2014 թվականին դիտված հիդրոոդերևութաբանական պայմանների համառոտ բնութագրիր: Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Հայաստանի հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի տեղեկատվության, 2014թ. տաք տարի է եղել: Օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմել է 7.0°C, որը նորմայից (5.5°C) բարձր է 1.5 աստիճանով: Տեղումների տարեկան քանակը կազմել է 548.9 մմ, որը նորմայից (592 մմ) ցածր է 7.3%-ով:

Գարնանն օդի միջին ջերմաստիճանը գերազանցել է նորման (4.4°C) 2.5 աստիճանով, սակայն տեղումները եղել են նորմայից (211 մմ) ցածր և կազմել 194.8 մմ: Մարտի 10-ին և 30-ին ք.Երևանում և լեռնային շրջաններում դիտվել են առատ տեղումներ ձյան տեսքով:

Ամառը Հայաստանի ամբողջ տարածքում եղել է տաք և չոր, հատկապես երկրորդ կեսին: Օդի ջերմաստիճանը եղել է նորմայից (15.7°C) բարձր 2 աստիճանով, իսկ տեղումները՝ նորմայից (148 մմ) ցածր մոտ 20 մմ-ով:

Օգոստոսին օդի ջերմաստիճանի դրական շեղումը կազմել է 3.5°C, որը համարվել է երկրորդ ամենաշոգ օգոստոսը սկսած 1961թ-ից: Օդի օրական միջին ջերմաստիճանի բարձր արժեքները ք.Երևանում պահպանվել են բավական երկար ժամանակ, որը բերել է աննախադեպ ջերմային ալիքների¹ (20 դեպք):

Աշնանն օդի միջին ջերմաստիճանը եղել է նորմայի (7.2°C) սահմաններում, իսկ տեղումների քանակը գերազանցել է նորման (119 մմ) գրեթե 32 մմ-ով:

Տարվա ընթացքում Արփա-Սևան ջրատարով Սևանա լիճ մուտք գործած ջրի ծավալը կազմել է 130.229 մլն. խոր. մ (ներառյալ ստորերկրյա ներհոսքը): Սևանա լճից ջրի բացթողում կատարվել է ապրիլի 23-ից սեպտեմբերի 30-ը՝ 269.633 մլն. խոր. մ:

Սևանա լճի մակարդակը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 1 900.16 մ, իսկ 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1 900.13 մ, որը 2013թ. նույն օրվա համեմատ ցածր է 3 սմ-ով:

2014թ. ՀՀ-ում ամսական և տարեկան միջին ջերմաստիճանների և տեղումների քանակների արժեքները և դրանց շեղումները 1961-1990թթ. նորմայից²

	Միջին ջերմաստիճանը, °C	Միջին ջերմաստիճանի 1961-1990թթ. նորման, °C	Միջին ջերմաստիճանի շեղումը 1961-1990թթ. նորմայից, °C	Տեղումների քանակը, մմ	Տեղումների 1961-1990թթ. նորման, մմ	Տեղումների շեղումը 1961-1990թթ. նորմայից, մմ
Հունվար	-5.2	- 6.8	1.6	40.2	35	5.2
Փետրվար	-4.4	- 5.8	1.4	8.1	41	-32.9
Մարտ	2.1	- 1.4	3.5	54.4	52	2.4
Ապրիլ	6.5	4.9	1.6	49.6	71	-21.4
Մայիս	11.9	9.6	2.3	90.8	88	2.8
Հունիս	14.8	13.4	1.4	65.6	71	-5.4
Հուլիս	18.1	17.1	1.0	43.9	44	-0.1


¹ Ջերմային ալիք է համարվում այն դեպքը, երբ հաջորդական հինգ և ավելի օրերի ընթացքում օդի օրական առավելագույն ջերմաստիճանն ավելի քան 3°C-ով բարձր է 1961-1990թթ. օրական միջին առավելագույն նորմայից:

² 1961-1990թթ. Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության (ՀՕԿ) կողմից ընդունված ստանդարտ ժամանակահատվածն է, որի միջին արժեքն ընդունվել է որպես նորմա:


5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Միջին ջերմաստիճանը, °C	Միջին ջերմաստիճանի 1961-1990թթ. նորման, °C	Միջին ջերմաստիճանի շեղումը 1961-1990թթ. նորմայից, °C	Տեղումների քանակը, մմ	Տեղումների 1961-1990թթ. նորման, մմ	Տեղումների շեղումը 1961-1990թթ. նորմայից, մմ
Օգոստոս	19.7	16.7	3.0	21.1	33	-11.9
Սեպտեմբեր	14.6	13.2	1.4	53.5	28	25.5
Հոկտեմբեր	7.1	7.0	0.1	40.1	50	-9.9
Նոյեմբեր	0.4	1.5	-1.1	56.8	41	15.8
Դեկտեմբեր	-1.6	-3.9	2.3	24.9	38	-13.1
Միջին տարեկան	7.0	5.5	1.5	548.9	592	-43.1

Օդի միջին ամսական ջերմաստիճանը ՀՀ-ում, 2014թ.




Տեղումների միջին ամսական քանակը ՀՀ-ում, 2014թ.




2014թ. ք.Երևանում ամսական և տարեկան միջին ջերմաստիճանների և տեղումների քանակների արժեքները և դրանց շեղումները 1961-1990թթ. նորմայից¹

	Միջին ջերմաստիճանը, °C	Միջին ջերմաստիճանի 1961-1990թթ. նորման, °C	Միջին ջերմաստիճանի շեղումը 1961-1990թթ. նորմայից, °C	Տեղումների քանակը, մմ	Տեղումների 1961-1990թթ. նորման, մմ	Տեղումների շեղումը 1961-1990թթ. նորմայից, մմ
Հունվար	-4.2	- 3.2	-1.0	42.2	29	13.2
Փետրվար	2.2	- 1.0	3.2	7.6	38	-30.4
Մարտ	9.1	5.1	4.0	75.3	41	34.3
Ապրիլ	14.0	11.6	2.4	19.5	51	-31.5
Մայիս	19.2	16.3	2.9	47.9	60	-12.1
Հունիս	22.7	20.6	2.1	23.4	29	-5.6
Հուլիս	26.3	24.6	1.7	2.3	14	-11.7
Օգոստոս	27.9	23.9	4.0	11.0	9	2.0
Սեպտեմբեր	22.3	19.8	2.5	15.1	9	6.1
Հոկտեմբեր	14.0	12.8	1.2	25.5	32	-6.5
Նոյեմբեր	6.0	6.6	-0.6	48.8	30	18.8
Դեկտեմբեր	3.6	0.5	3.1	20.0	26	-6.0
Միջին տարեկան	13.6	11.5	2.1	338.6	368	-29.4

Օդի միջին ամսական ջերմաստիճանը ք.Երևանում, 2014թ.



Տեղումների միջին ամսական քանակը ք.Երևանում, 2014թ.



¹ 1961-1990թթ. Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության (ՀՕԿ) կողմից ընդունված ստանդարտ ժամանակահատվածն է, որի միջին արժեքն ընդունվել է որպես նորմա:

Անբարենպաստ օդերևութաբանական երևույթները, 2014թ.

Երևույթի անվանումը	Բնութագիրը	Չափանիշը	Դեպքերի քանակը, միավոր
Մառախուղ	տեսանելիությունը	50 - 1 000 մ	179
Քամի	արագությունը	15 - 25 մ/վրկ	213
Բուք	տեսանելիությունը	≤ 1000 մ	1
	քամին	≥ 5 մ/վրկ	
Կարկուտ	տրամագիծը	5 - 20 մմ	36
Անձրև	քանակը	10 - 20 մմ/12 ժամ	5
Ընդամենը			434

Վտանգավոր օդերևութաբանական երևույթները, 2014թ.

Երևույթի անվանումը	Բնութագիրը	Չափանիշը	Դեպքերի քանակը, միավոր
Ուժեղ մառախուղ	տեսանելիությունը	≤ 50 մ	84
Ուժող քամի	արագությունը	≥ 25 մ/վրկ	27
Խոշոր կարկուտ	տրամագիծը	≥ 20 մմ	10
Ուժեղ անձրև	քանակը	≥ 30 մմ/12 ժամ	16
Ուժեղ ձյուն	քանակը	≥ 20 սմ/12 ժամ	21
Ընդամենը			158

5.7.2. 2015 թվականի հունվար ամսվա հիդրոօդերևութաբանական պայմանները

Հայաստանում: Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի տեղեկատվության, հունվարին օդի միջին ամսական ջերմաստիճանը հանրապետությունում եղել է նորմայից բարձր 1.5-2.5 աստիճանով, Արարատյան դաշտավայրում և դրա նախալեռներում՝ 3-4 աստիճանով:

Միջին ջերմաստիճանն առաջին և երրորդ տասնօրյակներում տարածաշրջանների զգալի մասում եղել է նորմայից բարձր 2-3 աստիճանով, ՀՀ Արագածոտնի մարզում և Արարատյան դաշտավայրում՝ 4-6 աստիճանով, երկրորդ տասնօրյակում՝ նորմայի սահմաններում մի փոքր դրական ու բացասական շեղումներով:

Միջին առավելագույն ջերմաստիճանը Սյունիքի հովիտներում կազմել է +9 +10°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +7 +8°C, ՀՀ Լոռու մարզում, Արարատյան դաշտավայրում, Արագածոտնի և Սյունիքի նախալեռներում՝ +4 +7°C, ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ -2 +2°C:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է հունվարի 6-ին: Սյունիքի հովիտներում գրանցվել է +15 +18°C, Արարատյան դաշտավայրում՝ +12 +15°C, ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում, Արագածոտնի և Սյունիքի նախալեռներում՝ +8 +13°C, լեռնային շրջաններում՝ +4 +6°C:

Միջին նվազագույն ջերմաստիճանը ՀՀ Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում կազմել է -5 -10°C (Աշոցք գյուղում (ՀՀ Շիրակի մարզ)՝ -16°C, Օձուն գյուղում (ՀՀ Լոռու մարզ)՝ -3°C), Սյունիքի նախալեռներում, Արարատյան դաշտավայրում և դրա նախալեռներում՝ -2 -6°C (ք.Միսիանում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ -8°C), ՀՀ Տավուշի մարզում՝ 0 -4°C, Սյունիքի հովիտներում՝ -2 +1°C:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է հունվարի 9-12-ին: լեռնային շրջաններում և Սյունիքի նախալեռներում գրանցվել է -15 -18°C (Աշոցք գյուղում՝ -32°C և Ամասիա գյուղում

(ՀՀ Շիրակի մարզ)՝ -25°C, ք.Գավառում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ -21°C), ք.Քաջարանում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ -10°C), ՀՀ Լոռու մարզում և Արագածոտնի նախալեռներում՝ -10 -15°C (ք.Տաշիրում (ՀՀ Լոռու մարզ)՝ -23°C), ՀՀ Տավուշի մարզում և Արարատյան դաշտավայրում՝ -7 -12°C (ք.Դիլիջանում (ՀՀ Տավուշի մարզ)՝ -15°C), Սյունիքի հովիտներում՝ -4 -7°C (ք.Կապանում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ -14°C):

Ամսական տեղումների քանակը ՀՀ Տավուշի մարզում կազմել է նորմայի 15-76%-ը, Արարատյան դաշտավայրում՝ 30-60%, ՀՀ Սյունիքի մարզում՝ 30-74%, ՀՀ Լոռու մարզում՝ 31-70%, ՀՀ Արագածոտնի մարզում՝ 52-78% (Ծաղկահովիտ գյուղում՝ 152%), ՀՀ Վայոց ձորի մարզում՝ 53-74%, ՀՀ Շիրակի մարզում՝ 64-125% (Աշոցք գյուղում՝ 207%), ՀՀ Կոտայքի մարզում՝ 74-79%, ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ 100-171%:

Հուլիսի 3-4-ին, 16-30-ին հանրապետության առանձին վայրերում դիտվել է մառախուղ՝ 50-500 մ տեսանելիությամբ: Հուլիսի 5-13-ին առանձին շրջաններում դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ մինչև 17-25 մ/վրկ:

Հուլիսի 31-ի դրությամբ տարածաշրջանների զգալի մասում հաստատվել է ձյան ծածկ, բացառությամբ Արարատյան դաշտավայրի, ՀՀ Լոռու, Սյունիքի և Տավուշի մարզերի: Ձյան ծածկի առավելագույն բարձրությունն Արագած բարձր լեռնային կայանում (3 229 մ) կազմել է 98 սմ, Աշոցք գյուղում՝ 53 սմ, ք.Հրազդանում (ՀՀ Կոտայքի մարզ) և Անանուն լեռնանցքում (ՀՀ Արարատի մարզ)՝ 38 սմ, Ամասիա գյուղում՝ 32 սմ, ք.Ապարանում (ՀՀ Արագածոտնի մարզ) և Սեմյոնովկա գյուղում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ 25-26 սմ, ք.Ջերմուկում (ՀՀ Վայոց ձորի մարզ)՝ 23 սմ, ք.Սևանում և Մասրիկ գյուղում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ 18-19 սմ, մնացած շրջաններում՝ 4-8 սմ:

Ջրի միջին ամսական ելքերը հանրապետության գետերում կազմել են նորմաների 50-100%-ը, առանձին գետերում (գետ Արփա (դիտակետ՝ Արենի և Եղեգնաձոր), գետ Եղեգիս (Հերմոնե), գետ Գորիսգետ (Գորիս))՝ 130-150%, իսկ մի շարք գետերում (գետ Սևջուր (Էջմիածին, Տարոնիկ), գետ Ախուրյան (Ամասիա))՝ մինչև 20%:

Հուլիսի 31-ի դրությամբ ջրի լցվածությունն Ախուրյանի ջրամբարում կազմել է 123.0 մլն. խոր. մ (ջրամբարի ծավալը՝ 525.0 մլն. խոր. մ), Արփի լճի ջրամբարում՝ 9.5 մլն. խոր. մ (105.0 մլն. խոր. մ), Ագատի ջրամբարում՝ 20.9 մլն. խոր. մ (70.0 մլն. խոր. մ) և Ապարանի ջրամբարում՝ 12.9 մլն. խոր. մ (91.0 մլն. խոր. մ):

Սևանա լճի մակարդակն ամսվա ընթացքում նախ բարձրացել է 1 սմ-ով, այնուհետև իջել 2 սմ-ով և հուլիսի 31-ի դրությամբ կազմել 1 900.12 մ, որը 2013թ. նույն օրվա համեմատ ցածր է 4 սմ-ով: